ՆԱՁԱՐ.– Խազնադա՞ր, խազնա՞ն ոնց է:

ԳԱՆՁԱՊԵՏ.– Հաշիւներն ստոյգ են, թագաւոր բազմահարուստ:

ՆԱՁԱՐ.– Հիմի կերթաք ու տէրութեանը լաւ մտիկ կտաք: Ամեն բան կարգին: Ձօրք է, հաշիւ է, հարստութիւն է՝ լաւ կպահէք, թէ չէ, կարկաժնե՛րդ կճղեմ, հա՛րամզադաներ: Ահա ինձնից հրամանք: Տէրութեան մէջ գողութիւն չլինի: Թալանները լա՛ւ տեղաւորէք: Ձգողանա՞ն: Իմացա՞ք:

ԲՈԼՈՐԸ.– Իմացանք, տէր արքա:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Ներս գալով) Փոթորիկ բարկութեան, նոր իշխաններն ակնկալում են ունկնդրութեանդ:

ՆԱՁԱՐ.– Հը՞

ՆԱՁԻՐ.– Ձորբաշէնցի Թամադա իշխանը եւ Ղոռոբուղա Բդեշխը իր խմբով:

ՆԱՁԱՐ.– Է՛, վե՞րջը…

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– Ասել կուզէ՝ իշխանն Սենեկապետ Բռնաշէնցի այլ եւ խոզերինջն եւ Վարազենի եւ համիարզ նորին:

ՆԱՁԱՐ.– (Անհանգիստ շարժումով) Ովքե՞ր են, ջանը՞մ, ասա նե՛րս գան:

ՍԵՆԵԿԱՊԵՏ.– (Ներս է հրաւիրում թամադային, Ղոռոբուղային եւ միւս հսկաներին, բոլորն էլ իշխանական նոր զգեստներով:)

ՆԱՁԱՐ.– (Նրանց տեսնելով) Բո՛, թամադա՞ն է, Դոռոբուղա՞ն էլի՞, էդպէ՛ս ասէք: (Նրանց) Հը՞, եկա՞ք:

ԹԱՄԱԴԱ.– Եկանք, թագաւորն ապրածՀ կենա:

ՆԱՁԱՐ.– Լա՞ւ էք:

ԹԱՄԱԴԱ.– Փառք աստուծո, լաւ ենք, թագաւորն ապրած կենա:

ՆԱՁԱՐ.– Բոլոր զօրբաշէնցիներիդ եւ հսկաներիդ մի-մի երկրի իշխան կարգեցի: Հող ու ժողովուրդ ստացա՞ք:

ԲՈԼՈՐԸ.– Ստացանք, թագաւորն ապրած կենա:

ՆԱՁԱՐ.– Հիմի ինձանից հրամանք: Բոլոր զօրբաշէնցիքդ ու հսկաներդ պիտի ապրէք պալատիս մէջ, ղոլամ պիտի դառնաք, անձ պիտի պահէք: Ձեր հողերը կտաք կառավարչի, ժողովուրդը կաշխատի՝ դուք կուտէք: Եւ հրաման չէ, որ դուք աշխատէք: Հիմի ամենքդ ազնիւ էք: Իմացա՞ք:

ԹԱՄԱԴԱ.– Իմացանք, թագաւորն ապրած կենա:

ՆԱՁԱՐ.– Ղոռոբուղա, իմացա՞ր:

ՂՈՌՈԲՈՒՂԱ.– Իմաա՛ցա, Հա՛ա՛մմմ…Թագաա՛ւոր: